

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
Տիգրան Վլադիմիրի Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Սամսոն Աշոտի Դավոյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Վիլեն Վիկտորի Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի հուլիսի 7-ին ժամը 15⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության թիվ 015 Մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, քաղ. Երևան, Աբովյան փող. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թվականի մայիսի 25-ին:

Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,

տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ա.Հ.Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում ստվերային տնտեսության նվազեցման գործում հրատապ խնդիրներից մեկը տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն է: Ցանկացած տնտեսության «քառսային, չկանխատեսվող և տարերային» զարգացման առաջնային մեխանիզմը ստվերային տնտեսությունն է, ինչն առաջացնում է սոցիալ-տնտեսական ծանր հետևանքեր, ինչպիսիք են՝ եկամուտների կրճատումն ու անհավասարաչափ բաշխումը, ոչ ֆորմալ զբաղվածությունը, խորացող աղքատությունն ու բնակչության արտագաղթը: Ուստի ստվերային տնտեսության դեմ պայքարը լավագույնս կազմակերպելու համար անհրաժեշտ է վերանայել տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները, իրականացնել հետևողական քաղաքականություն, գործադրել կառավարման արդյունավետ գործիքակազմ:

Ատենախոսությունում վերլուծվել են ստվերային տնտեսության առաջացման նախադրյալները, հատկապես շեշտադրվել են այն դրդապատճառները, որոնք առաջանում են տնտեսվարող սուբյեկտների մոտ ստվերային գործարքների նկատմամբ հակվածությունը մեծացնելու առումով և որի հիման վրա մատնանշվել են տնտեսության հիմնական բացթողումները, որոնք առաջացնում են ստվերային տնտեսության մասշտաբների ընդլայնում, և որպես բացասական հետևանք՝ բնակչության կենսամակարդակի նվազեցում: Իհարկե, բազմաթիվ աշխատանքներ են կատարվել ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայազգի հետազոտողների կողմից, ուղղված ստվերային տնտեսության մասշտաբների գնահատմանը և դրանց ազդեցությանը տնտեսության առանձին ոլորտների վրա, սակայն, ստվերային տնտեսության գնահատումը, ճշգրիտ գնահատական տալը կարծես թե իրատեսական չէ, այսինքն՝ ստեղծված է մի իրավիճակ, որ դեռևս չկա մեկ միասնական մոտեցում, թե ինչպես կարելի է գնահատել ստվերային տնտեսության մասշտաբները: Թերևս այս հիմնահարցերով էլ պայմանավորված է ընտրված թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների ու բնակչության կենսամակարդակի փոխազդեցության հիմնախնդիրները և այդ նպատակի լուծման համար աշխատանքում դրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել ստվերային տնտեսության առաջացման նախադրյալները և դրանց դերը սոցիալ-տնտեսական զարգացման գործում,
- իրականացնել գործոնային վերլուծություն ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների վերաբերյալ,
- գնահատել MIMIC մեթոդով ստվերային տնտեսության նախադրյալների ձևավորման հիմքերը,
- մշակել ստվերային տնտեսության ծավալների նվազեցմանն ուղղված մեխանիզմներ,
- առաջարկել ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատման մոտեցումներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսության ստվերային հատվածն է, իսկ հետազոտության առարկան՝ ստվերային տնտեսության կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել ստվերային տնտեսության վերաբերյալ տարբեր տնտեսագետների գրքերը, գիտական հոդվածները և ինտերնետային կայքերը:

Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակած զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, էմպիրիկ, տնտեսաչափական վերլուծության, հարցումների մեթոդներ և գործիքներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության արդյունքում մշակվել և ստացվել են տնտեսական և գործնական նշանակության արդյունքներ, որոնցից հիմնականները հետևյալներն են՝

1. MIMIC գործիքակազմի միջոցով գնահատվել է ստվերային տնտեսության չափն՝ ըստ՝ աշխատուժի կառավարման մակարդակի, ինքնազբաղվածության, անվանական ՀՆԱ և կանխիկ փողի, ինչպես նաև՝ առաջարկվել են միջոցառումներ ուղղված ստվերային տնտեսության կրճատմանը բնակչության կենսամակարդակի բարելավման գործում:
2. Կաուֆման-Կալիբարդի մեթոդի հիման վրա գնահատվել և բացահայտվել են ՀՀ-ում ստվերային տնտեսության չափը բնութագրող ցուցանիշները, մասնավորապես՝ էլեկտրաէներգիայի սպառման և իրական ՀՆԱ-ի աճի տեմպերի:
3. Սպառման առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների՝ հացի, շաքարավազի, կարագի և բուսական յուղի շուկաներում, բացահայտվել են ստվերի առաջացման նախադրյալները և դրանց նվազեցման միտումները:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսությունը գիտական հետազոտություն է, որից բխող եզրակացությունները և հետևությունները կարող են օգտագործվել այս հիմնախնդիրներով զբաղվող բոլոր շահագրգիռ մարմինների կողմից, ինչպիսիք են՝ ֆինանսների նախարարության, տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, հարկային մարմինների և այս հիմնախնդիրներով զբաղվող հետազոտողների, ասպիրանտների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 7 գիտական հոդվածներում:


Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 111 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, ներկայացվել է գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, տեսական և տեղեկատվական հիմքերը, փորձարկումներն ու հրապարակումները, ինչպես նաև՝ ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների առաջացման տեսամեթոդաբանական հիմքերը» գլխում ներկայացված է «Ստվերային տնտեսություն» եզրույթն, որը ի հայտ է եկել այն պահից սկսած, երբ հասարակական կյանքի տարբեր ոլորտները կանոնակարգելու նպատակով սկսեցին ձևավորվել պետական կառավարման մարմինները՝ տարբերելու տնտեսական գործունեության ֆորմալ ձևերը վերջիններիս ոչ ֆորմալ ձևերից:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն ստվերային տնտեսության սահմանման երկու մոտեցումներ, որոնք էլ համակարգվել են **գծապատկեր 1-ում**: Այսպես՝ առաջին մոտեցման կողմնակիցները (Զիմ Թովմասը, Ֆ. Շնայդերը, Դ. Էնեստը, Ֆիլիպ Սմիթը, Դ. Բհաթաչարյա¹ և այլոք) ստվերային տնտեսության հիմքում ընդունել են այն դրույթը, որ վերջինս հանդիսանում է որպես չհաշվառվող տնտեսական գործունեության տեսակ: Օրինակ՝ Զ. Թովմասի. «Դժվար է տալ ստվերային տնտեսության ֆորմալ սահմանում» և ըստ նրա ստվերային տնտեսական գործունեությունն իր մեջ «ներառում է գործունեության այն տեսակները, որոնք չեն գրանցվում ազգային եկամտի հաշիվներում»²:



Գծապատկեր 1. Ստվերային տնտեսության սահմանման մոտեցումները³

¹ Dilip K. Bhattacharyya, " On the Rational of Estimating the Hidden Economy ", The Economic Journal, 109, no 456 (sane 1999), p. 2


² Tomas Jim (1999). Quantifying the black economy: measurement without theory yet again? The Economic journal, 109 (June), p. 382

³ Գծապատկեր 1-ը կազմվել է հեղինակի կողմից:

Ատենախոսության երկրորդ՝ «Ստվերային տնտեսության և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության գնահատումը ՀՀ-ում» գլխում ներկայացված են ստվերային տնտեսական գործունեության ծավալների գնահատումը, որը իրականացվում է նաև մոնետար մեթոդի այլ մոտեցումների միջոցով, մասնավորապես՝ էկոնոմետրիկ մեթոդներով, որտեղ ստվերային տնտեսությանը նպաստող գործոններից առանձնացվել են՝ աշխատուժի կառավարման մակարդակը և ինքնազբաղվածության մակարդակը⁴:

Գծապատկեր 2-ի համաձայն ՀՀ-ում ստվերային տնտեսության մասշտաբները հաշվարկվել են MIMIC⁵ մեթոդի հիման վրա՝ ըստ հետևյալ ցուցանիշների. որտեղ՝

- η_t -ն՝ ստվերային տնտեսության չափն է (մլն. դրամ),
- X_{1t} -ն՝ աշխատուժի կառավարման մակարդակն է, (այն հաշվարկվել է պետական աշխատողների թվի և տնտեսապես ակտիվ բնակչության հարաբերակցությամբ),
- X_{2t} -ն՝ ինքնազբաղվածության մակարդակն է (հազ. մարդ),
- Y_{1t} -ն՝ անվանական ՀՆԱ-ն է, շուկայական գներով (մլն. դրամ),
- Y_{2t} -ն՝ կանխիկ փողի մասն է փողի զանգվածում (մլն. դրամ):



Գծապատկեր 2. ՀՀ ստվերային տնտեսության MIMIC մեթոդի բովանդակությունը⁶

ՀՀ-ում ստվերային տնտեսության, աշխատուժի կառավարման մակարդակների, ինքնազբաղվածության, կանխիկ փողի, անվանական ՀՆԱ-ի ցուցանիշների միջև կապը բացահայտելու համար առաջարկվել են հետևյալ վարկածները⁷.

Վարկած 1. ՀՀ-ում ստվերային տնտեսության, աշխատուժի կառավարման և ինքնազբաղվածության մակարդակների միջև գոյություն ունի էական կապ: Ըստ այդմ էլ՝ առաջարկվել է հետևյալ բանաձևը՝

⁴ Schneider F. (2007), Shadow Economies and Corruption All Over the World: New Estimates for 145 Countries, Economics, 2007-9, July., p.14
⁵ Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն ստվերային տնտեսության գնահատման տարբեր մեթոդներ: Որոնցից առավել լայն կիրառություն է ստացել ստվերային տնտեսության գնահատման MIMIC մեթոդը:
⁶ Գծապատկեր 2-ը կազմվել է հեղինակի կողմից:
⁷ Պետրոսյան Լիլիթ Մանվելի, «Ստվերային տնտեսության գնահատումը MIMIC մեթոդաբանությամբ, գործիքներ և մեխանիզմներ», «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ, որոնումներ, հեռանկարներ, լուծումներ», Գիտական հոդվածների ժողովածու - 1(2), Գ.Վ.Պլեխանովի անվան ՌՏՀ Երևանի մասնաճյուղի հրատ., 2019թ., էջ 156-162

$$SH_t = \beta_0 + \beta_1 ML_t + \beta_2 SE_t + \xi_t \quad (1)$$

որտեղ՝

$t = 1, \dots, p$

SH_t -ը՝ ստվերային տնտեսության չափն է (մլն. դրամ),

ML_t -ը՝ աշխատուժի կառավարման մակարդակն է, (այն հաշվարկվել է պետական աշխատողների թվի և տնտեսապես ակտիվ բնակչության հարաբերակցությամբ),

SE_t -ն՝ ինքնազբաղվածության մակարդակն է (հազ. մարդ),

$\beta_0, \beta_1, \beta_2$ -ը՝ առաձգականության գործակիցներ են,

ξ_t -ն՝ պատահական սխալի մեծությունն է:

Վարկած 1-ի թեստավորում:

Վարկած 1-ի հավաստիությունը ստուգելու համար իրականացվել է թեստավորում (պարամետրերի գնահատում) փոքրագույն քառակուսիների եղանակով: Հաշվարկների հիմքում որպես էկզոգեն փոփոխականներ դիտարկվել են 1997-2016 թթ. ստվերային տնտեսության, աշխատուժի կառավարման և ինքնազբաղվածության մակարդակների վիճակագրական տվյալները տարեկան կտրվածքով: Մինչ մոդելի գնահատելը տվյալները գծայնացվել են՝ դրանք լոգարիթմելով:

Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքում ստացված արդյունքները արտացոլված են **աղյուսակ 1-ում**, որտեղ $\beta_0, \beta_1, \beta_2$ անկախ փոփոխականների գործակիցներն են: Իսկ գործակիցների t-վիճականին և Prob(t)-ն⁸ ցույց են տալիս, որ մոդելում գնահատված գործակիցները վիճակագրորեն նշանակալի են 1% արժեքականության մակարդակում $|t| > t_{\text{գրիտ.}}$ բոլոր գնահատված գործակիցների համար ($| -9.69 | > 2.1, | -5.27 | > 2.1, | 6.27 | > 2.1$)⁹: F վիճականին և Prob(F)-ը վկայում են, որ հավասարումը վիճակագրորեն նշանակալի է 1% արժեքականության մակարդակում ($F > F_{\text{գրիտ.}}$, $F = 77.18$ և $F_{\text{գրիտ.}} = 3.59$): Մոդելում $H_0: \beta_1 = \beta_2 = \dots = \beta_{p-1} = 0$ վարկածը մերժվել է արժեքականության 1% մակարդակում¹⁰:

Աղյուսակ 1

Ստվերային տնտեսության, աշխատուժի կառավարման և ինքնազբաղվածության մակարդակների հաշվարկային արդյունքները ըստ MIMIC մեթոդի¹¹

Բացատրող փոփոխականներ	Գործակից	t-վիճականի	Prob.	Ճշգրտված R ²
Հաստատուն	-3.163240	-9.689820	0.0000	0.889122
ML _t	-1.318724	-5.273807	0.0001	
SE _t	0.259842	6.270893	0.0000	

⁸ Елисеева И.И.. Эконометрика, М., 2009, с. 25-28.

⁹ Մոդելում $n=20, p=3, n-p=17, \alpha=0.05$ արժեքականության մակարդակի դեպքում $v=1-\alpha/2, v=0.975$, Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝ 2.10:

¹⁰ Մոդելում $n=20, p=3, \alpha=0.05$ արժեքականության մակարդակի դեպքում $v=0.95, k_1=2, k_2=17$, Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝ $F_{\text{գրիտ.}} = 3.59$:

¹¹ Հաշվարկվել է հեղինակի կողմից:

Աղյուսակ 1-ի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ դիտարկվող գործոնների և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի նշանակալի փոխկապվածություն: Ճշգրտված դետերմինացիայի գործակիցը հավասար է 0.8891, այսինքն՝ կախյալ (ստվերային տնտեսության չափ) փոփոխականի վարիացիայի 88.91%-ը բացատրվում է ռեգրեսիայի մոդելում ներառված ML_t և SE_t փոփոխականներով, իսկ մնացած 11.09%-ը՝ պատահական սխալներով¹²:

(2) գծային ռեգրեսիայի մոդելի հիման վրա ստացել ենք գնահատված գործակիցներով հետևյալ մոդելը.

$$SH_t = -3.163240 - 1.318724ML_t + 0.259842SE_t + \xi_t \quad (2)$$

Այսպիսով, (2) տնտեսաչափական մոդելի արդյունքում հիմնավորվել է՝

- կառավարման մակարդակի՝ (ML_t), մեկ տոկոսային կետի աճը բերում է ստվերային տնտեսության՝ (SH_t), կառավարման մակարդակով պայմանավորված 1.32 տոկոսային կետի նվազման, քանի որ որոշ ոլորտներում պետության առկայությունը կարող է մարդկանց հետ պահել ստվերային դաշտ մտնելուց:
- ինքնազբաղվածության մակարդակի՝ (SE_t), մեկ տոկոսային կետի աճը բերում է ստվերային տնտեսության՝ (SH_t), ինքնազբաղվածության մակարդակով պայմանավորված 0.26 տոկոսային կետի ավելացման, քանի որ ինքնազբաղվածությունը ընդհանուր աշխատուժի մեջ դիտարկվում է որպես ոչ ֆորմալ տնտեսության որոշիչ:

Վարկած 2. ՀՀ-ում անվանական ՀՆԱ-ի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի էական կապ: Ըստ այդմ էլ առաջարկվել է հետևյալ բանաձևը՝

$$GDP_t = \lambda_0 + \lambda_1 SH_t + \varepsilon_t \quad (3)$$

որտեղ՝

SH_t -ը՝ ստվերային տնտեսության չափն է (մլն. դրամ),

GDP_t -ն՝ անվանական ՀՆԱ-ն է, շուկայական գներով (մլն. դրամ),

λ_0, λ_1 -ը՝ առաձգականության գործակիցներ են,

ε_t -ն՝ պատահական սխալի մեծությունն է:

Վարկած 2-ի թեստավորում:

Վարկած 2-ի հավաստիությունը ստուգելու համար իրականացվել է թեստավորում փոքրագույն քառակուսիների եղանակով: Հաշվարկման համար դիտարկվել են 1997-2016 թթ. անվանական ՀՆԱ-ի և ստվերային տնտեսության տարեկան վիճակագրական տվյալները, որոնց հիման վրա կառուցվել է համապատասխան ռեգրեսիոն մոդել: Մինչ մոդելի գնահատելը տվյալները գծայնացվել են՝ դրանք լոգարիթմելով:

Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքում ստացված արդյունքները արտացոլված են **աղյուսակ 2-ում**, որտեղ λ_0, λ_1 անկախ փոփոխականների գործակիցներ են: Գնահատված գործակիցները վիճակագրորեն նշանակալի են արժեքականության 1% մակարդակում¹³: F վիճականին և Prob(F)-ը վկայում են, որ ռեգրեսիայի ամբողջ

¹² Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., Эконометрика. Начальный курс: Издательство "ДЕЛО" Москв, 2004, с. 67.

¹³ Մոդելում $n=20$, $p=2$, $n-p=18$, $\alpha=0.05$ արժեքականության մակարդակի դեպքում $v=1-\alpha/2$ $v=0.975$, Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝ 2.10:

հավասարումը վիճակագրորեն արժեքական է 1% արժեքականության մակարդակով: Մոդելում Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության կրիտիկական արժեքն է՝ $F_{կրիտ.}=4.41^{14}$, իսկ $F=249.22$, հետևաբար՝ $F > F_{կրիտ.}$:

Աղյուսակ 2

Անվանական ՀՆԱ-ի և ստվերային տնտեսության հաշվարկային արդյունքները ըստ MIMIC մեթոդի¹⁵

Բացատրող փոփոխականներ	Գործակից	t-վիճականի	Prob.	R ²
Հաստատուն	14.44412	358.9727	0.0000	0.932642
SH _t	1.397381	15.78695	0.0000	

Աղյուսակ 2-ի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ՀՆԱ-ի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի նշանակալի փոխկապվածություն: Ղեկտրմիմացիայի գործակիցը (R²) հավասար է 0.93, այսինքն՝ կախյալ փոփոխականի փոփոխության 93%-ը բացատրվում է ռեգրեսիայով, իսկ մնացած 7%-ը՝ պատահական սխալներով: Սա նշանակում է, որ 93%-ի դեպքում ՀՆԱ-ի տատանումները կարող են բացատրվել մեր կողմից դիտարկվող գործոնի՝ ստվերային տնտեսության ազդեցությամբ:

(3) գծային ռեգրեսիայի հավասարման հիման վրա ստացել ենք հետևյալը՝

$$GDP_t = 14.44412 + 1.397381SH_t + \varepsilon_t \quad (3)$$

Այսպիսով, (3) տնտեսաչափական մոդելի և մաթեմատիկական գործիքակազմի կիրառության արդյունքում հիմնավորվել է, որ ստվերային տնտեսության՝ (SH_t), մեկ տոկոսային կետի աճը բերում է անվանական ՀՆԱ-ի՝ (GDP_t), 1.39 տոկոսային կետի ավելացման:

Վարկած 3. ՀՀ-ում կանխիկ փողի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի էական կապ: Ըստ այդմ էլ առաջարկվել է հետևյալ բանաձևը՝

$$M_t = \lambda_0 + \lambda_1 SH_t + \varepsilon_t \quad (4)$$

որտեղ՝

M_t-ը՝ կանխիկ փողի մասն է փողի զանգվածում (մլն. դրամ),

SH_t-ը՝ ստվերային տնտեսության չափն է (մլն. դրամ),

λ_0, λ_1 -ը՝ առաձգականության գործակիցներ են,

ε_t -ն՝ պատահական սխալի մեծությունն է:

Վարկած 3-ի թեստավորում:

Վարկած 3-ի հավաստիությունը ստուգելու համար իրականացվել է թեստավորում փոքրագույն քառակուսիների եղանակով: Բացի այդ հաշվարկման համար դիտարկվել են 1997-2016 թթ. կանխիկ փողի և ստվերային տնտեսության տարեկան վիճակագրական

¹⁴ Մոդելում $n=20$, $p=2$, $\alpha=0.05$ արժեքականության մակարդակի դեպքում $v=0.95$, $k_1=1$, $k_2=18$, Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝ $F_{կրիտ.}=4.41$:

¹⁵ Հաշվարկվել է հեղինակի կողմից:

տվյալները, իրականացվել է համապատասխան ռեգրեսիոն վերլուծություն: Մինչ մոդելի գնահատելը տվյալները գծայնացվել են:

Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքում ստացված արդյունքները արտացոլված են աղյուսակ 3-ում, որտեղ λ_0 , λ_1 անկախ փոփոխականների գործակիցներն են: Մոդելի գնահատված գործակիցները վիճակագրորեն նշանակալի են՝ $\text{Prob}(t) < 0.05$, հետևաբար, մոդելը ևս վիճակագրորեն նշանակալի է արժեքականության 1% մակարդակի վրա¹⁶:

F վիճականին և $\text{Prob}(F)$ -ը վկայում են, որ ռեգրեսիայի ամբողջ հավասարումը վիճակագրորեն արժեքական է 1% արժեքականության մակարդակով: Մոդելում Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության կրիտիկական արժեքն է՝ $F_{\text{կրիտ.}} = 4.41$ ¹⁷, իսկ $F = 543.29$, հետևաբար՝ $F > F_{\text{կրիտ.}}$:

Աղյուսակ 3

Կանխիկ փողի և ստվերային տնտեսության հաշվարկային արդյունքները ըստ MIMIC մեթոդի¹⁸

Բացատրող փոփոխականներ	Գործակից	t-վիճականի	Prob.	R ²
Հաստատուն	11.67427	306.0712	0.0000	0.967931
SH _t	1.955736	23.30860	0.0000	

Աղյուսակ 3-ի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ կանխիկ փողի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի նշանակալի փոխկապվածություն: Դետերմինացիայի գործակիցը (R²) հավասար է 0.97, այսինքն՝ կախյալ փոփոխականի փոփոխության շուրջ 97%-ը բացատրվում է ռեգրեսիայով, իսկ մնացած 3%-ը՝ պատահական սխալներով: Սա նշանակում է, որ 97%-ի դեպքում կանխիկ փողի տատանումները կարող են բացատրվել մեր կողմից դիտարկվող գործոնի՝ ստվերային տնտեսության ազդեցությամբ:

Արդյունքում՝ (5) գծային ռեգրեսիայի հավասարման հիման վրա ստացել ենք հետևյալը՝

$$M_t = 11.67427 + 1.955736SH_t + \varepsilon_t \quad (5)$$

Այսպիսով, (5) տնտեսաչափական մոդելի և մաթեմատիկական գործիքակազմի կիրառության արդյունքում հիմնավորվել է, որ ստվերային տնտեսության՝ (SH_t), մեկ տոկոսային կետի աճը բերում է կանխիկ փողի՝ (M_t), 1.95 տոկոսային կետի ավելացման, որը պայմանավորված է նրանով, որ տնտեսավարող սուբյեկտները իրենց բոլոր գործարքները գերադասում են կատարել կանխիկ փողով, իսկ կանխիկ փողի շրջանառությունն ավելի դժվար է վերահսկվում, քան ոչ կանխիկը, հետևաբար կանխիկ փողի նկատմամբ պահանջարկի և շրջանառության մեջ կանխիկ փողի աճը բերում են տնտեսության ստվերային հատվածի աճ:


¹⁶ Մոդելում $n=20$, $p=2$, $n-p=18$, $\alpha=0.05$ արժեքականության մակարդակի դեպքում $v=1-\alpha/2$ $v=0.975$, Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝ 2.10:

¹⁷ Մոդելում $n=20$, $p=2$, $\alpha=0.05$ արժեքականության մակարդակի դեպքում $v=0.95$, $k_1=1$, $k_2=18$, Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝ $F_{\text{կրիտ.}} = 4.41$:

¹⁸ Հաշվարկվել է հեղինակի կողմից:

MAX-MIN մեթոդի հիման վրա աշխատանքում հաշվարկվել է ՍԳԻ-ի և իրական ՀՆԱ-ի կապը, համաձայն որի ՍԳԻ-ի լրացուցիչ 0.5% ավելացումը կարող է բերել իրական ՀՆԱ-ի 0.57 տոկոսային կետի ավելացման:

Ինչպես նաև աշխատանքում առաջարկվել է ձևաչափ, համաձայն որի, պետությունը կարող է մշակել միջոցառումների համալիր, որի նպատակը բնակչության կենսամակարդակի բարելավումն է (տես՝ գծապատկեր 3-ը):



Գծապատկեր 3

Բնակչության կենսամակարդակի բարելավման ձևաչափը¹⁹

Ատենախոսության երրորդ՝ «Ստվերային տնտեսության նվազեցման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» գլխում գնահատվել են էլեկտրաէներգիայի սպառման էլաստիկության գործակիցները ըստ ՀՆԱ-ի, ցույց տալով Հայաստանի Հանրապետությունում ստվերի առաջացման պատճառները էլեկտրաէներգիայի ծավալից կախված, հիմք ընդունելով Կաուֆման-Կալիբարդիի մեթոդը՝

$$\varepsilon_t = \frac{\varepsilon_0}{gdp_0} = \frac{\varepsilon_1}{gdp_1} = \dots = \frac{\varepsilon_n}{gdp_n} \approx 1 \quad (6)^{20}$$

Ըստ այդմ, դիտարկվել են 2010-2018 թթ. էլեկտրաէներգիայի սպառման և իրական ՀՆԱ-ի տարեկան վիճակագրական տվյալները, իսկ հաշվարկման արդյունքները ներկայացվել են աղյուսակ 4-ում:

Արդյունքում՝ եթե ստացված արդյունքները հավասար են 1-ի, հետևաբար, որքան ավելանում է էլեկտրաէներգիայի սպառումը, այնքան պետք է ավելանա ՀՆԱ-ն, սակայն,

¹⁹ Գծապատկեր 3-ը կազմվել է հեղինակի կողմից:

²⁰ Schneider Friedrich, Buehn Andreas, "Shadow Economy: Estimation Methods, Problems, Results and Open questions", published by De Gruyter Open, February 28, 2017, p. 10


ստացված արդյունքները հավասար չեն 1-ի (1-ից մեծ կամ փոքր են), ուստի, այդ տարիներին առկա է ստվեր:

Աղյուսակ 4

«Հ-ում ստվերային տնտեսության չափը բնութագրող ցուցանիշները ըստ էլեկտրաէներգիայի սպառման և իրական ՀՆԱ-ի աճի տեմպերի (Կաուֆման-Կալիբարդիի մեթոդի համաձայն)²¹

Տարի	Էլեկտրաէներգիայի սպառման աճի տեմպ (%)	Իրական ՀՆԱ-ի աճի տեմպ (%)	Էլեկտրաէներգիայի սպառման էլաստիկությունը ըստ ՀՆԱ-ի (%)
2011 թվականը 2010 թվականի համեմատ	12	2.4	5
2012 թվականը 2011 թվականի համեմատ	2	2.5	0.8
2013 թվականը 2012 թվականի համեմատ	4	-3.4	-1.2
2014 թվականը 2013 թվականի համեմատ	-2	0.6	-3.3
2015 թվականը 2014 թվականի համեմատ	3	-0.4	-7.5
2016 թվականը 2015 թվականի համեմատ	-0.1	-2.8	0.1
2017 թվականը 2016 թվականի համեմատ	5	1.5	3.3
2018 թվականը 2017 թվականի համեմատ	-4	0.4	-10

«Հ ստվերային տնտեսության չափերը գնահատելու համար աշխատանքում իրականացվել է գործիքային վերլուծություն, համաձայն որի պարենային ապրանքներից առանձնացվել են առաջին անհրաժեշտության սպառման ապրանքները, մասնավորապես՝ հացը և շաքարավազը:



Պատկեր 4. 2010-2017 թթ. հացի շրջանառությունը բնութագրող ցուցանիշները «Հ-ում (մլն.դրամ)²²

²¹ Հաշվարկները իրականացվել են հեղինակի կողմից:

²² Պատկեր 4-ը կազմվել է հեղինակի կողմից:

Ըստ այդմ, աշխատանքում առաջարկվել է հաշվարկել (7) բանաձևը, որի հիման վրա հաշվարկվել է հացի ստվերային շրջանառությունը և այդ ոլորտում ստվերային տնտեսության առաջացման նախադրյալները:

$$SH = \frac{(BP-BC)-BCR}{GDP} \times 100\% \quad (7)$$

որտեղ՝

SH-ը՝ ստվերային տնտեսության ծավալն է (%),


BP-ը՝ հացի արտադրության ծավալն է (մլն.դրամ),

BC-ը՝ հացի փաստացի սպառումն է (մլն.դրամ),

BCR-ը՝ հացի սպառման նորման է (մլն.դրամ),

GDP-ն՝ անվանական ՀՆԱ-ն է (մլն.դրամ):

Աշխատանքում գնահատվել է, որ 2010-2017 թթ. հացի սպառման ծավալները գերազանցել են հացի արտադրության և սպառման նորմայի ծավալները (**տես՝ գծապատկեր 4-ը**) և հետևաբար դիտարկվող ցուցանիշների միջև առկա տարբերությունները կազմել են՝ 2010 թվականին՝ -1.51 մլն.դրամ, 2011 թվականին՝ -1.64 մլն.դրամ, 2012 թվականին՝ -1.5 մլն.դրամ, 2013 թվականին՝ -1.58 մլն.դրամ, 2014 թվականին՝ -1.57 մլն.դրամ, 2015 թվականին՝ -1.69 մլն.դրամ, 2016 թվականին՝ -1.59 մլն.դրամ, 2017 թվականին՝ -1.39 մլն.դրամ: Այսինքն՝ 2017 թվականին 2010 թվականի համեմատ հացի շրջանառության ծավալների միջև առկա տարբերությունը նվազել է 0.9 անգամ:



Գծապատկեր 5. 2010-2017 թթ. շաքարավազի շրջանառությունը բնութագրող ցուցանիշները ՀՀ-ում (մլն.դրամ)²³

Սպառման առաջին անհրաժեշտության ապրանքներից հաջորդ ապրանքատեսակը շաքարավազն է: Հարկ է նշել, որ **գծապատկեր 5-ի** տվյալների համաձայն 2017 թվականին 2016 թվականի համեմատ շաքարավազի շրջանառության ծավալները, սպառման նորման և փաստացի սպառումը ավելացել են համապատասխանաբար՝ 13.2 մլն. դրամով, 5.4 մլն. դրամով և 2.2 մլն. դրամով: Հետևաբար, 2010-2017 թթ. շաքարավազի սպառման նորմայի


²³ Գծապատկեր 5-ը կազմվել է հեղինակի կողմից:

Ժավալները գերազանցել են շաքարավազի փաստացի սպառման ժավալները, բայց ոչ շաքարավազի շրջանառության ժավալները: Ինչն էլ վկայում է այն մասին, որ ՀՀ բնակչությունը, այսպես ասած, «քաղցր ուտող չէ»: Ըստ այդմ, աշխատանքում առաջարկվել է հաշվարկել (8) բանաձևը:

$$SH = \frac{(SIM-SC)-SCR}{GDP} \times 100\% \quad (8)$$

որտեղ՝

- SH-ը՝ սովերային տնտեսության ժավալն է (%),
- SIM-ը՝ շաքարավազի ներմուծման ժավալն է (մլն.դրամ),
- SC-ը՝ շաքարավազի փաստացի սպառումն է (մլն.դրամ),
- SCR-ը՝ շաքարավազի սպառման նորման է (մլն.դրամ),
- GDP-ն՝ անվանական ՀՆԱ-ն է (մլն.դրամ):



Գծապատկեր 6. 2010-2017թթ. սովերային տնտեսությունն՝ ըստ հացի և շաքարավազի (%)²⁴

Պետք է նշել, որ 2017 թվականին 2010 թվականի համեմատ հացի սովերի ժավալները նվազել են 1.9%-ով, իսկ 2017 թվականին 2016 թվականի համեմատ հացի սովերի ժավալները նվազել են 0.6%-ով: Այսպես՝ 2010 թվականին հացի սովերի ժավալները կազմել են 4.4%, 2011 թվականին՝ 4.3%, 2012 թվականին՝ 3.5%, 2013 թվականին՝ 3.4%, 2014 թվականին՝ 3.3%, 2015 թվականին՝ 3.4%, 2016 թվականին՝ 3.1%, 2017 թվականին՝ 2.5%: Շաքարավազի սովերի ժավալները 2017 թվականին 2011 թվականի համեմատ նվազել են 5%-ով, իսկ 2017 թվականին 2016 թվականի համեմատ շաքարավազի սովերի ժավալները նվազել են 11.4%-ով, մասնավորապես, 2011 թվականին շաքարավազի սովերի ժավալները կազմել են 8.9%, 2012 թվականին՝ 5.8%, 2013 թվականին՝ 1.5%, 2015 թվականին՝ 11.1%, 2016 թվականին՝ 15.3%, 2017 թվականին՝ 3.9% (տես՝ գծապատկեր 6-ը):

²⁴ Գծապատկեր 6-ը կազմվել է հեղինակի կողմից:

«Եզրակացություններ» բաժնում և դրանց հիման վրա աշխատանքում ներկայացվել են հիմնավոր առաջարկություններ և հասցեական միջոցառումներ, մասնավորապես՝

1. Ստվերային տնտեսական գործունեության մասշտաբների գնահատման, ինչպես ուղղակի, այնպես էլ՝ անուղղակի մեթոդներից յուրաքանչյուրի կիրառման արդյունքում ստացված արդյունքները էապես տարբերվում են մյուս մեթոդներից յուրաքանչյուրի կիրառման ստացված արդյունքներից: Հետևաբար, ստվերային տնտեսության մասշտաբները գնահատելու առումով, ՀՀ տնտեսության համար նպատակահարմար է կիրառել ուղղակի և անուղղակի մեթոդների համախմբությունը, ինչը որոշ չափով հնարավորություն կտա ստվերային տնտեսության մասշտաբների վերաբերյալ ստանալ ընդհանրական, հավաստի գնահատական և կազմել մոտավոր պատկերացում:

2. MAX-MIN մեթոդի միջոցով կատարվել է գնահատում, ըստ իրական ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի ցուցանիշների, քանի որ պետության կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը, կամ ոչ արդյունավետ քաղաքականությունը կարող են տանել այնպիսի մի իրավիճակի, որ տնտեսվարողները կարողանան գտնել համապատասխան միջոցներ՝ ստվերում գործելու համար, ինչն էլ պետք է հաշվի առնվի պետության կողմից: Եվ կիրառելով այս կանխատեսման մեթոդը արդյունքում բացահայտվել է, որ փաստորեն սպառողական գների ինդեքսի լրացուցիչ 0.5% ավելացումը կարող է բերել իրական ՀՆԱ-ի 0.57 տոկոսային կետի ավելացման:

3. ՀՀ տնտեսության ստվերային հատվածի MIMIC մեթոդով գնահատման արդյունքում ստացվել է այն, որ ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալների ընդլայնումը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- կանխիկ փողը՝ այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության ստվերային հատվածում, բոլոր դրամական գործարքները ձգտում են կատարել կանխիկ փողով, իսկ կանխիկ փողի շրջանառությունն ավելի դժվար է վերահսկել, քան՝ ոչ կանխիկը: Հետևաբար՝ կանխիկ դրամի նկատմամբ պահանջարկի և շրջանառության մեջ կանխիկ դրամի միավոր աճը ենթադրում է տնտեսության ստվերային հատվածի աճ:

- անվանական ՀՆԱ-ն՝ տնտեսության ստվերային հատվածի աճը նշանակում է, որ ներդրված ռեսուրսները, հատկապես՝ աշխատուժը (եթե ոչ ամբողջությամբ, ապա՝ մասամբ), դուրս է հոսում պաշտոնական հատվածից և ինչը բացասական ազդեցություն է ունենում տնտեսական աճի և տնտեսական զարգացման վրա:

- ինքնազբաղվածության մակարդակը՝ տնտեսվարող սուբյեկտները, չգրանցելով իրենց տնտեսական գործունեության իրականացման կարգավիճակը ավելացնում են ոչ օրինական աշխատողների թիվը, իսկ որքան բարձր է ինքնազբաղվածության մակարդակը, այնքան մեծ է ստվերային հատվածում ներառված տնտեսվարող սուբյեկտների թիվը:

4. Հայաստանի Հանրապետությունում ստվերի կրճատման առումով, առաջարկվում է կանխիկ փողի շրջանառությունից անցում կատարել ոչ կանխիկ փողի շրջանառության, որն էլ իր հերթին բավականին ռիսկային և բարդ գործընթաց է, քանի որ անկանխիկ դրամի շրջանառությունը կարող է ուղեկցվել բազմաթիվ ռիսկերով: Մասնավորապես այն, որ ՀՀ բոլոր քաղաքացիները, այդ թվում նաև ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ, պետք է ներկայացնեն իրենց եկամուտների և ծախսերի վերաբերյալ հայտարարագրեր, իսկ եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը իրականացվում է առևտրային բանկերի միջոցով, և առևտրային բանկերը նույն տեղեկատվությունը տրամադրում են ՊԵԿ-ին, այսինքն՝ ստացվում է

խաչաձև ստուգում, սակայն, ինչն էլ շատ ռիսկային գործընթաց է, ինչու, որովհետև նախ առաջինը խախտվում է առևտրային գաղտնիքի մասին օրենքը:

5. Ուսումնասիրելով տարբեր երկրների փորձը եկել ենք այն եզրահանգմանը, որ կանխիկ փողի շրջանառությունից անցումը ոչ կանխիկ փողի շրջանառության, լավագույն միջոց է ստվերային տնտեսության ծավալները էական նվազեցնելու և անդառնալի հետևանքները, ինչպիսիք են՝ աղքատության մակարդակը, եկամուտների բևեռացումը, անհավասարաչափ բաշխումը, ինչպես նաև՝ գործազրկության մակարդակը, կրճատելու համար: Ուստի, առկա խնդիրների լուծումները կստեղծեն այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք են՝ առևտրային բանկերի կողմից ոչ կանխիկ գործարքների ընդլայնման մեխանիզմների ներդրումը, կորպորատիվ կառավարման մշակույթի ձևավորումը, աշխատանքային առավել նպաստավոր պայմանների ստեղծումը, կառավարման ավելի մատչելի մեխանիզմների ներդրումը:

6. Բնակչության կենսամակարդակի բարելավման համատեքստում առաջարկվել է ձևաչափ, համաձայն որի, պետությունը կարող է մշակել միջոցառումների համալիր, մասնավորապես՝ ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացում, աղքատության հաղթահարում, եկամուտների վերաբաշխում, ապրանքների և ծառայությունների հասանելիություն և բարձր որակի ապահովում: Հետևաբար, ՀՀ-ում իրականացվող ցանկացած բարեփոխման նպատակը սոցիալական ծանր հետևանքների վերացումն է, ինչպիսիք են՝ աղքատության և գործազրկության մակարդակների կրճատումն ու ստվերային տնտեսության ծավալների նվազեցումը:

7. Էլեկտրաներգիայի սպառման ծավալների փոփոխությունները պայմանավորող գործոնների հիման վրա բացահայտվել է ստվերային տնտեսության չափը ըստ Կաուֆման-Կալիբարդիի մեթոդի: Համաձայն որի, Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի սպառման էլաստիկության գործակիցների (ըստ իրական ՀՆԱ-ի) մեկից մեծ կամ փոքր լինելը բացատրվում է ստվերային տնտեսության առկայությամբ: Մասնավորապես՝ համեմատելով արտադրության ծավալների հետ, հիմնավորվել է, որ ՀՀ-ում արտադրության համար տնտեսական նախադրյալները ոչ մրցունակ են, ինչը բերում է ոչ ֆորմալ եկամուտների և ոչ ֆորմալ զբաղվածության ձևավորմանը, իսկ էլեկտրաէներգիայի սպառման առումով՝ իրական ՀՆԱ-ի նկատմամբ ձեղքվածքի առաջացմանը, ինչն էլ բացատրվում է ստվերային տնտեսության առկայությամբ: Ըստ այդմ, առաջարկվում է իրականացնել ենթակառուցվածքային բարեփոխումներ, որոնք ուղղված կլինեն էլեկտրաէներգիայի սակագների վերանայմանը, այլընտրանքային էներգիայի ստեղծմանը, այդ ոլորտում ստվերային տնտեսության ծավալների կրճատմանը և բնակչության կենսամակարդակի բարելավմանը:

8. Աշխատանքում հիմնավորվել է ՀՀ-ում սպառման առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների (հացի, շաքարավազի, կարագի և բուսական յուղի) շրջանառության ծավալներում ստվերի առկայությունը, թերևս դա կարելի է բացատրել նրանով, որ ստվերային տնտեսության ծավալների նվազեցումը պայմանավորված է եղել պետական կառավարման վարչարարական գործիքակազմի կիրարկմամբ, ինչպես նաև՝ վերահսկողության համակարգի ուժեղացմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Petrosyan Lilit Manvel, «Role of the shadow economy in development of the economy», «Вестник науки и образования», N 11(35), г. Москва, 2017 г., с. 43-46:
2. Petrosyan Lilit Manvel, «The assessment of the approaches for shadow economy in the context of the analysis of food products», «WEB OF SCHOLAR», N 4(22), Vol.3, RS Global Sp. Z O.O., Scientific Educational Center Warsaw, Poland, 2018, p. 22-25:
3. Petrosyan Lilit Manvel, «The factors and reasons of the shadow economy», SCIENCE AMONG US», N 3(10), г. Магнитогорск, 2018, p. 23-29:
4. Petrosyan Lilit Manvel, «Shadow economy volumes assessment approaches and their application mechanisms in Armenia», Агентство международных исследований, Международной научно-практической конференции «ЧЕЛОВЕЧЕСКИЙ КАПИТАЛ КАК ВАЖНЕЙШИЙ ФАКТОР ПОСТИНДУСТРИАЛЬНОЙ ЭКОНОМИКИ», РФ г.Татароог, 2019 г., с.5-7:
5. Պետրոսյան Լիլիթ Մանվելի, «Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների գործոնային վերլուծությունը», «Այլընտրանք» գիտական հանդես, N 4, Երևան, 2017թ., էջ 66-71:
6. Պետրոսյան Լիլիթ Մանվելի, «ՀՀ բնակչության կենսամակարդակի վրա ազդող գործոնների վերլուծությունը», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», գիտական հոդվածների ժողովածու ՄԱՍ 2, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2018թ., էջ 261-266:
7. Պետրոսյան Լիլիթ Մանվելի, «Ստվերային տնտեսության գնահատումը MIMIC մեթոդաբանությամբ, գործիքներ և մեխանիզմներ», «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ, որոնումներ, հեռանկարներ, լուծումներ», Գիտական հոդվածների ժողովածու - 1(2), Գ.Վ.Պլեխանովի անվան ՌՏՀ Երևանի մասնաճյուղի հրատ., 2019թ., էջ156-162:

ЛИЛИТ МАНВЕЛОВНА ПЕТРОСЯН

ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ВЗАИМОСВЯЗЕЙ МЕЖДУ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИМИ ПОСЛЕДСТВИЯМИ ТЕНЕВОЙ ЭКОНОМИКИ И УРОВНЕМ БЛАГОСОСТОЯНИЯ НАСЕЛЕНИЯ В РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 00.02 - «Экономика, управление хозяйством и его секторами».

Защита состоится 7-го июля 2020 года, в 15⁰⁰ часов на заседании Специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: г. Ереван, 0009, улица Х.Абовяна 52.

АВТОРЕФЕРАТ

Цель и задачи исследования. Основной целью диссертационного исследования является обоснованием ключевых вопросов управления социально-экономическими последствиями теневой экономики и уровнем улучшения благосостояния населения. Для решения этой цели были рассмотрены следующие задачи:

- изучить предпосылки возникновения теневой экономики и их роль в социально-экономическом развитии;
- провести факторный анализ социально-экономических последствий теневой экономики;
- оценить основы предпосылок теневой экономики, используя метод MIMIC;
- разработать механизмы сокращения объемов теневой экономики;
- предложить подходы к оценке социально-экономического воздействия теневой экономики.

Объект и предмет исследования. Предметом исследования является теневой сектор экономики Армении, а предметом исследования - социально-экономические проблемы управления теневой экономикой.

Основные научные результаты исследования и их новизна.

В ходе исследования разработаны и получены результаты как теоретического, так и практического значения, научная новизна которых заключается в следующем:

1. Оценено размер теневой экономики с использованием инструментария MIMIC в соответствии с уровнем управления трудовыми ресурсами, само занятостью, номинальным ВВП и денежными средствами, а также предложены меры по сокращению теневой экономики для улучшения уровня жизни населения.
2. На основе метода Кауфмана-Калиберда определены и оценены показатели, характеризующие размер теневой экономики в Республике Армения, в частности темпы потребления электроэнергии и рост реального ВВП.
3. На рынках продовольственных товаров для потребления определены предпосылки для появления теневой экономики и степень их влияния на уровень жизни населения.

LILIT MANVEL PETROSYAN

**MANAGERIAL ISSUES BETWEEN SOCIAL-ECONOMIC CONSEQUENCES OF
SHADOW ECONOMY AND LIFE STANDARD OF POPULATION IN RA**

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economics in the field 00.02 "Economics, Management of the Economy and its Branches"

The defense of the dissertation will take place on 7 July 2020, at 15⁰⁰ at the Meeting of the Specialized Council 015 in Economics of SCC of RA acting at the Yerevan State University. Address: Republic of Armenia, Yerevan, 0009, 52 Kh.Abovyan str.

ABSTRACT

The Purpose and Objectives of the Research: The main target of the dissertation is the substantiation key issues of managing the socio-economic consequences of the shadow economy and the management of the living standards of the population, based on the above goal, the following tasks are set:

- to study the prerequisites for the emergence of the shadow economy and their role in socio-economic development;
- to conduct factor analysis on the socio-economic consequences of the shadow economy;
- to assess the basis for the formation of shadow economy prerequisites by the MIMIC method;
- to develop mechanisms to reduce shadow economy volumes;
- to Offer approaches to assess the socio-economic impact of the shadow economy.

The object and subject of the research. The subject of the research is the shadow sector of the RA economy, and the subject of the research is the socio-economic problems of shadow economy.

The Main Research Results and Scientific Novelty of the Dissertation.

In the course of the research, the results of theoretical and practical significance have been developed and obtained, the scientific novelty of which is as follows:

1. By the implementing the toolkit of MIMIC the size of the shadow economy has been estimated with according to the level of workforce management, self-employment, nominal GDP and cash, as well as suggested measures to reduce the shadow economy to improve the living standards of the population.
2. Based on the Kauffmann-Kaliberda method, indicators characterizing the size of the shadow economy in the Republic of Armenia have been identified and evaluated, in particular the rates of electricity consumption and real GDP growth.
3. Pre-emergence shadows and their impact on the livelihoods of the population have been identified in the markets of foodstuffs for consumption.

